8400

С.1930/1460

ՀՐԱՀԱՆԳ ՀԿԿ (Բ) ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՏՈՒՄՆ ՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրացումն և ի զարգացումն ՀԿԿ (բ) Կենտկոմի ու ԿՎՀ Միացյալ Պլենումի Համամիութենական 16-րդ կուսկոնֆերանսի Բանաձևի

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академия Наук
СССР

ЗКПЗ
2-94

Հրատարակչություն Ա. Ց. Վ. Հ. ՀԿԿԿ (Բ

ԹԻՖԼԻՍ

1929

ЗКПЗ 17.06.2013
Հ-94

Հայաստան
24 SEP 2006

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

09 DEC 2009

ՀԲՄՀԵՆԳ ՀԿԿ (Բ) ԾԱՐՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՏՈՒՄՆ ՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԵԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԵՍԻՆ

Ի լրացումն և ի զարգացումն ՀԿԿ (բ) Կենտկոմի ու ԿՎՀ Միացյալ Պլենումի Համամիութենական 16-րդ Կուսկոնֆերանսի Բանաձևի

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Հրատարակություն Ա. Ց. Վ. Հ. ՀԿԿ (բ)
ԹԻՖԼԻՍ
1929

8400

Տպ. հրատ. «Զարյա Վոստոկա»-յի
Ռուսթավելի պրոսպեկտ, 36.
Պատ. 1218. Տիրաժ 1000.
Գլավլիտ 831.

ՊԵՏ. ԿՈՄ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԵՎ ՕՍՄԱՆԵՑԻ
ՀՍՍՌ-Արա.ՍՍՀ
Ա. ԱՄ. Ա. ՄՈՍԿՎԱՅԻ
Ա. ՄՈՍԿՎԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ
S6236.66

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Զտման և ստուգման յենթակա յեն ՀԿԿ (բ) բոլոր անդամները ու թեկնածուները։

ՀԿԿ (բ) Կենտկոմի և ԿՎ Հանձնաժողովի անդամները, վորպես Համկոմկուսի (բ) համագումարում ընտրվածներ, ստուգման են յենթարկվում միայն այն դեպքում, յեթե դրա համար կա կուսակցական վորևե նկատառում, կամ կուսակցության մի խումբ անդամներ պատճառաբանված հայտարարություն կտան այն մասին, թե անհրաժեշտ է դրանց կազմից սրա կամ նրա ստուգումը։ Այդպիսի դեպքերում ստուգման կարգը սահմանում է ԿՎ Հանձնաժողովը։

2. «Ադաջին հերթին կատարվում է յերկրային (վաքզալին) կազմակերպու-

թյունների և ազգ. կոմկուսների կուսակցական ղեկավար որգանների, ինչպես և շրջանային ռազմական կուսհանձնաժողովների ստուգումը։ Ստուգումը կատարվում է ԿՎՀ հատուկ ստուգիչ յեռյակների կողմից, վորոնք ստուգում են վերոհիշյալ կուսկոմների և վերահսկիչ հանձնաժողովների պլենումների բոլոր անդամներին և թեկնածուներին, և այդ ստուգումը կատարվում է ընդհանուր կարգով, այսինքն՝ բջիջի միջոցով, ինչպես կուսակցության յուրաքանչյուր անդամի և թեկնածուի ստուգումը։ ԿՎՀ ստուգիչ յեռյակները ստուգում են ամենից առաջ կուսկոմիտների բյուրոների, պրեզիդիումների և ՎՀ կուսկոլեգիայի անդամներին և թեկնածուներին, վորոնք ստուգումից հետո անհապաղ ձեռնարկում են կազմակերպելու ստուգիչ հանձնաժողովներ շրջանային (ռայոնական)կազմակերպություններում»։

3. ՀԿԿ(բ) շարքերի ընդհանուր զրման ու նրա անդամների ստուգման

հիմնական խնդիրն է՝ վճռականապես մաքրել կուսակցության շարքերը վոչ կոմմունիստական տարրերից (մանրամասները տես զրման մասին 16-րդ կուսկոնֆերանսի բանաձևի մեջ)։ Դրան զուգընթաց՝ կուսակցության զրումն ու ստուգումը նպատակ է դնում իրեն՝ կուսակցականորեն և դաստիարակչորեն ներազդել այն կոմմունիստների վրա, վորոնք լինելով կուսակցության անձնվեր ու ակտիվ անդամ, կատարել են այս կամ այն զանցառումը։ Այդպիսի ընկերների վերաբերմամբ անհրաժեշտ է կիրառել ընկերական զրույցի սիստեմը՝ հենց ստուգման ժամանակ և անհրաժեշտության դեպքում միայն յենթարկել կուսակցական պատժի։

ՀԿԿ (բ) շարքերի զրումը և ստուգումը նպատակ ունի վոչ միայն ստուգել կոմմունիստների անձնական հատկությունները, այլ և ամբողջ բջիջների կազմակերպչական գրությունը և աշխատանքի վորակը, ինչպես և զուգընթաց ստուգել ստուգվող բջիջի աշխատանքի համապատասխան կոմիտեյի կողմից ղեկավարության կազմակերպումը և մեթոդները։ Բջիջների աշխատանքը ստուգելիս բնավ չպետք է սահմանափակվել միայն նրա բացա-

սական հատկություններով, անհրաժեշտ է նշել նաև կարևորագույն նվաճումները նրանց աշխատանքում։

4. Կուսակցական շարքերի զտումը և ստուգումը նախապատրաստելու և անցկացնելու ժամանակ, անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի այդ «հսկայական կարևորություն ունեցող խնդրի» (Լենին) շուրջը լայնորեն ծավալվի ամբողջ կուսակցության ինքնաքննադատությունը և ինքնագործունեությունը, ոգտագործելով բոլոր հնարավորությունները այս բնագավառում (կուսակցական հատուկ ժողովներ, թերթեր, բանավոր և գրավոր հայտարարություններ, կազմակերպչական-տեխնիկական ոգնություն ստուգիչ հանձնաժողովներին և այլն)։ Ինքնագործունեության և ինքնաքննադատության այս ծավալումը պետք է կատարվի ներկուսակցական դեմոկրատիայի հիման վրա։

Վերահսկիչ հանձնաժողովների, ստուգիչ հանձնաժողովների, ինչպես և մյուս բոլոր կուսորդանների աշխատանքը պետք է անցնի ամբողջ կուսակցության և առաջին հերթին ստուգվող կազմակերպության վերահսկողության տակ։ Ամեն մի բջիջ կարող է ընդհանուր ժողովում քննադատության յենթարկել ստուգիչ հանձնաժողովի վորևե վորոշումը և բողոքարկել այն, չվերացնելով, սակայն, այդ վորոշումը։

5. Կուսակցության շարքերի զտումը և ստուգումը անհրաժեշտ է անցկացնել համաձայն Լենինի ցուցմունքներին, «հենվելով անկուսակցական բանվորների և գյուղացիական մասսաների փորձի և ցուցմունքների վրա»։ Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի անկուսակցական բանվորները, բատրակները, չքավորները և միջակ գյուղացիությունը, առանձնապես նրանց ակտիվները ժամանակին տեղյակ լինեն զտման նպատակների և խնդիրների, ստուգվող բջիջի զոնբաց ժողովների ժամանակի մասին, վորպեսզի նման ժողովների մասսայականությունը չխանգարվի կազմակերպչական-տեխնիկական գրժվարությունների պատճառով (ժողովի անհարմար ժամանակը և տեղը, և այլն)։

Կուսղեկավարությունը լիովին ապահովելու նպատակով, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել իրագործելու 16-րդ կուսկոնֆերենցիայի 9-րդ պարագրաֆը

6. Կուսակցության շարքերի և կուսակցական կազմակերպություն-

ների զտումը և ստուգումը անցկացնելիս անհրաժեշտ է ծավալել մասսայական լայն աշխատանք լուսաբանելու կուսակցության հիմնական խնդիրները և կոմունիստական ավանդարդի պարտավորությունները, որոնց տեսանկյունից պետք է անցնի ՀԿԿ (բ) շարքերի զտումն ու ստուգումը։

Միաժամանակ, նկատի ունենալով, որ կուսակցության շարքերի զտումն ու ստուգումը անխզելի կերպով կապված է այդ շարքերը հասարակական աշխատանքում փորձված լավագույն բանվորներով, բատրակներով և չքավորներով լրացնելու խնդրի հետ, անհրաժեշտ է լայն ոգտագործել բջիջների դռնբաց ժողովները, նվիրված զտմանը և ստուգմանը՝ բանվորներին կուսակցության մեջ ներգրավելու գործը ակտիվ կերպով ծավալելու համար։

7. ՀԿԿ (բ) շարքերի զտումն ու ստուգումը պետք է կատարվի Լենինի ավանդների համաձայն «առանց նայելու անձնավորություններին», սակայն ստուգիչ հանձնաժողովները և ստուգվող բջիջները պարտավոր են հակահարված տալ նրանց, որոնք կփորձեն ոգտագործել զտումն ու ստուգումը անձնական հաշիվներ մաքրելու,

խմբակային պայքարի նպատակով, բոլոր խռովարարներին և բանսարկուներին, ինչպես և նրանց, որոնք փորձում են անարգել կոմունիստին կուսակցության գիծը հաստատուն կերպով անցկացնելու համար աշխատանքային դիսցիպլինայի, խնայողության ռեժիմի, արտադրության ռացիոնալացման համար մղված պայքարում, և ընդհանրապես նրա համար, որ նա պահանջկոտ է աշխատանքը ճշտորեն և լավ կատարելու համար իրեն յենթակա ընկերների վերաբերմամբ։ Դրա հետ միասին անհրաժեշտ է վճռական հակահարված տալ նրանց, որոնք կովարար և խառնակիչ կհամարեն բոլոր նրանց, որոնք անկեղծ ձգտում են ոգնել կուսակցությանը զտման ժամանակ յերևան հանելու անհարազատ տարրերը իր շարքերում, կամ նշելու սխալները, բացերը և թերիները այս կամ այն ընկերոջ աշխատանքում։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Զտման ու ստուգման ընդհանուր ղեկավարությունը տանում է ՀԿԿ (բ)

ԿՎ հանձնաժողովը՝ իսկ տեղերում՝ տեղական վերահսկիչ հանձնաժողովները։ Կոմբինատներում զտումը կատարելու ոպերատիվ ուղղակի որդան են հանդիսանում ստուգ-հանձնաժողովները։

Ստուգ-հանձնաժողովների կազմը հաստատում են համապատասխան վերահանձնաժողովները (շրջանային, նահանգական, ռայոնական, գավառական, վորտեղ կան այդպիսիները), վորոնք համաձայնություն են գալիս համապատասխան կուսորգանների հետ։ Ստուգ-հանձնաժողովների նախագահներին հաստատում են վերադաս վերահս. հանձնաժողովները։

9. Կուսակցության շարքերի զտման և ստուգման ղեկավարությունը պետք է հիմնվի, գլխավորապես, ստուգ-հանձնաժողովների վերահսկիչ հանձնաժողովների և վերջիններիս ու ՀԿԿ (բ) վերադաս ՎԿ ու ԿՎՀ հետ ունեցած կենդանի կապի վրա։ Այդ կենդանի ղեկավար կապը պետք է իրականանա՝ վերադաս վերահսկ. հանձնաժողովի պատասխանատու աշխատավորներին ուղարկելով ստորադաս վերհսկ. հանձնաժողովի մեջ՝ ոգնելու նրան։

10. Ժամանակ առ ժամանակ տեղական վերահս. հանձնաժողովները գումարում են ստուգման հանձնաժողովները՝ լսելու նրանց հաշվետվությունը ստուգման ընթացքի մասին և կատարելու փորձի փոխանակություն, ստուգելու առանձին ստուգհանձնաժողովների աշխատանքի ընդհանուր գիծն ու վերացնելու նրանց աշխատանքների մեջ նկատված թերությունները։

11. Կուսակցական կոմիտեները և վերահսկիչ հանձնաժողովները պետք է նախապատրաստական աշխատանք տանեն կուսակցական կազմակերպությունների զտման ու ստուգման համար, մամուլի մեջ և բանվորական ժողովներում բացատրելով զտման նպատակները ու խնդիրները, ինչպես նաև նրա կիրառման ձևերն ու մեթոդները։

Առանձնապես կուսակցական կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն, զտման և ստուգման ժամանակ, մամուլի խաղալիքների վրա, վորպես այն որդանի, վոր կանչված է մասսայական բացատրական աշխատանք տանելու և կուսակցականորեն ղեկավարելու ստուգման ու զտման ամբողջ գործը։

Մասնավորապես հանձնարարվում է զումարել մամուլի աշխատավորների խորհրդակցություն՝ զման ու ստուգման հարցերի շուրջը և ապահովել մամուլի առանձին որգաններին պատշաճ ղեկավարությունը կուսակցական կոմիտեների կողմից։

Վերահսկիչ հանձնաժողովները պետք է կազմակերպեն բանավոր և գրավոր հայտարարությունների ընդունելությունը կուսակցության անդամներից և անկուսակցական բանվորներից գյուղացիներից՝ առանձին կուսկազմակերպությունների դրության և առանձին կոմմունիստների մասին։

12. Կուսակցության շրջանային, գավառային և վոլոստային կոմիտեները վաղորոք պատրաստելու յեն իրենց ունեցած նյութերից տեղեկություններ և նախնական կարճ ընութագրություններ բջիջների մասին, նշելով (բաց թողնված)։

13. Կուսակցական բջիջները կամ բջիջային վերահսկիչ հանձնաժողովները (այնտեղ, վորտեղ կազմակերպված են) Վ.Հ ղեկավարությամբ նախքան զումը անց են կացնում բացատրական լայն աշխատանք բնակչության մասսաների մեջ զման խնդիրներ մասին, կազմակերպում են կուսակցության առանձին անդամներին վերաբերող հայտարարությունների ստացումը, այդ հայտարարությունների ստուգումը և անհրաժեշտ դեպքում պահանջում են լրացուցիչ տեղեկություններ կուսակցության անդամների մասին համապատասխան Վ.Հ կամ կուսակցական կոմիտեների միջոցով։

14. Զման և ստուգման նախապատրաստության կարևորագույն խնդիրն և ստուգել հանձնաժոիովների անդամների ընտրությունը և հատուկ պատրաստությունը։ Ստուգիչ հանձնաժողովները պետք է ընտրվեն հեղինակավոր, իդեոլոգիապես հաստատուն, քաղաքական-գրագետ, ուրիշ կուսակցությունների չպատկանած տոկուն կոմմունիստներից, վորքան հնարավոր է արտադրական բանվորներից։

Ստուգող յեռյակների անդամների համար կուսակցական ստաժը պետք է սահմանվի 10 տարուց վոչ պակաս։ Առանձին դեպքերում դաղգայահի բանվորների վերաբերմամբ կարելի յե թույլ տալ 8-7 տարվա ստաժ վերադաս Վ.Հ-երի (ազգ. կոմկուսների Կ.Վ.Հ. յերկրային, շրջանային Վ.Հ) թույլ-

տվությամբ։ Ազգային և ծայրամասային կազմակերպություններում վոչ պակաս, քան 7 տարի։ Առանձին դեպքերում կարելի է թույլ տալ ստաժը իջեցնելու մինչև 5 տարի վերադաս ՎՀ-երի թույլտվությամբ։ Ստուգիչ հանձնաժողովների նախագահներին անհրաժեշտ է ըստ հնարավորին ընտրել վերոհիշյալ հանձնաժողովների անդամներից, վորոնք լիովին համապատասխանում են վերոհիշյալ բոլոր պահանջներին։ Ստուգիչ հանձնաժողովների ամբողջ կազմը նախքան ստուգումը պետք է ամենամանրակրկիտ կերպով ստուգվի ՎՀ կուսկոլլեգիաների կողմից։

Զտումն սկսելուց առաջ ստուգման յուրակների բոլոր անդամները պետք է մանրազննին կերպով հրահանգվեն՝ ստուգման նպատակների ու խնդիրների մասին, ստուգումն անցկացնելու մեթոդների ու տեխնիկայի մասին։ Նրանք պետք է ծանոթանան նաև անցյալ ստուգումների բացերին ու սխալներին։ Դրա համար գումարվում են ստուգ-հանձնաժողովների հատուկ խորհրդակցություններ, վորտեղ մանրամասնորեն քննվում են այդ հարցերը։

Այդ ձևով ընտրված ու պատրաստված ընկերների քանակը պետք է մի փոքր ավելի լինի այն քանակից, վորն անհրաժեշտ է՝ համաձայն պլանի։ Ընկերների այդ պահեստը ոգտագործվում է այն ժամանակ, յերբ անհրաժեշտ է արագացնել ստուգման թափը և փոխարինել այն ընկերին, վորոնք յետ են կանչվում, այս կամ այն պատճառով, ստուգ. հանձնաժողովներից։

Ստուգման հանձնաժողովների անդամների ցուցակները պետք է իր ժամանակին հրապարակվեն տեղական մամուլի մեջ։ Ստուգ. հանձնաժողովի անդամի դեմ հայտարարություն արբվելու դեպքում՝ վերահսկիչ հանձնաժողովը պետք է արտակարգ կերպով քննի այն։

15. Ստուգման հանձնաժողովների անդամներին ընտրելու և պատրաստելու հետ միասին, կուսակցական կոմիտեներն ու վերահսկիչ հանձնաժողովները պետք է հաշվառեն և պատշաճորեն հրահանգեն ավելի մեծ քանակությամբ կուսակցական այնպիսի ընկերների, վորոնց կարելի է ոգտագործել ստուգման հանձնաժողովների անդամներին ոգնելու գործում և

մասսայական բացատրական աշխատանքի համար, ինչպես նաև զանազան ոժանդակ աշխատանքների համար։

ՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՍՏՈՒԳՎՈՂՆԵՐԻՆ

16. Կուսքջիջների ու աշխատանքի և առանձին կոմմունիստների հատկություններին ստուգումն ու զտումը բնավ չպետք է համարվեն, թե ստուգողների և թե ստուգվողների կողմից, կուսակցության կատարյալ անվստահության արտահայտություն տվյալ բջիջի բոլոր կոմմունիստների հանդեպ։ Ստուգիչ հանձնաժողովներն իրենց աշխատանքում պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները, վորպեսզի ստեղծեն ամենաընկերական մթնոլորտ, վորտեղ կուսակցական նվիրված յուրաքանչյուր կոմմունիստ զգա, վոր կոչված է ոգնելու իր կազմակերպության մեջ բոլոր բացերը յերևան հանելու և արմատախիլ անելու գործին։

Միանգամայն անթույլատրելի յե շտապողականություն, վոչ ընկերական և կոպիտ վերաբերմունք կոմմունիստների անձնական ստուգման ժամանակ։ Ստուգիչ հանձնաժողովները պարտավոր են ծանոթացնել յուրաքանչյուր կոմմունիստին այն նյութերին, վոր վերաբերում են իր մեղադրությանը, և միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում չպետք է հայտնել հայտարարություն տվողի անունը։ Յուրաքանչյուր ստուգվողն իրավունք ունի ստանալու անհրաժեշտ ժամանակ բացատրություններ տալու և հերքելու իր վրա բարդված մեղադրանքները։

17. Ստուգհանձնաժողովները կոմմունիստների անձնական ստուգման դեպքում առանձնապես խնամքոտ վերաբերմունք են ցույց տալիս դեպի դաշտյահի բանվորները, բատրակները, չքավոր գյուղացիները, իսկ մասնավորապես՝

ա) դեպի կանայք ու հատկապես դեպի մայրերը,

բ) դեպի այն ընկերները, վորոնք իրենց վարչության հետևանքով անկարող են ցուցաբերել կուսակցական հասարակական մեծ ակտիվություն, և հատկապես դեպի պատերազմի ինվալիդները։

18. Անհրաժեշտ է չափազանց զգույշ վերաբերմունք ցուցաբերել դեպի՝ ստուգման ենթակա կոմմունիստի

562366
ՊԵՏ. ԱՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUA-Арм.ССР
Ленинакан
им. А. Мясникян

այն վորակի վորոշումը, ինչպիսին է «կուսաբալլատ», «մասսաներից կտրված», «այլասերված» վորոշումը և այլն։

Կուսակցական բալլատ չի կարելի համարել այն ընկերին, վոր միանգամայն բարեխղճաբար է կատարում իր պարտականությունները նրան հանձնարարված խորհրդային, տնտեսական, պրոֆմիութենական, կոոպերատիվ և այլ աշխատանքների ասպարեզում, վորոնք լիովին կլանում են նրա ժամանակը։

Կուսակցությունն իրավունք ունի պահանջելու, վորպեսզի նըրանք, ինչքան էլ զբաղված լինեն կուսակցության հանձնարարությամբ, այնուամենայնիվ վորոշ ժամանակ նվիրեն տեղերում կազմակերպչական, պրոպագանդիստական ու ագիտացիոն աշխատանքներին, սակայն այդ աշխատանքների չափը պիտի համապատասխանի նրանց հիմնական աշխատանքի, նրանց առողջության և յուրաքանչյուր ընկերի ընդհանուր կուլտուրականության ու քաղաքագիտության պահանջներին։

Դրան զուգընթաց, յուրաքանչյուր առանձին դեպքում, յերբ կոմմունիստը

պասսիվ վերաբերմունք է ցույց տալիս դեպի կուսակցական աշխատանքը, պետք է պարզել, թե մեղավոր չեն արդյոք այդ բանում բջիջը կամ ուրիշ կոմմունիստներ։

Ճիշտ այդպես անհրաժեշտ է նաև մեծ խնամքով ու բազմակողմանի կերպով քննել այս կամ այն կոմմունիստին մասսաներից կտրվելու մեջ մեղադրելու դեպքում՝ ամեն կողմնակի հանգամանք, խիստ հակահարված տալով նրանց, ով կփորձի այդ բանում մեղադրել այն ընկերոջը, վոր պայքարում է մեկի պոչից քարշ գալու, նեղ համքարային տրամադրությունների ու պահանջների և ամբողջ բանվոր դասակարգի շահերին հակասող յերևույթների դեմ։

19. Բոլորովին անթույլատրելի յե՝ փորփրել կոմմունիստի տնձնական կենցաղային պայմանները։

Կոմմունիստի կենցաղային այն գծերը, վորոնք ունեն հակահասարակական, հակակուսակցական բնույթ, ինչպես՝ սիստեմատիկ հարբեցողությունը, ինչպես և հակասեմիտիզմը, կրոնասիրությունը և այլն, չի համապատասխանում կոմմունիստի կոչմանը։ Յուրաքանչյուր տվյալ դեպքում բանվորների, բատրակների, չքավոր գյու-

զացիների վերաբերմամբ անհրաժեշտ է ուշի-ուշով պարզել, թե վորքան անուղղելի յեն այդ հատկություններն ունեցողները, արդյոք դրանք հետևանք չեն անբավարար գիտակցության, յուտաճնացության կամ բջիջի անգործունեության իր անդամների կուսդաստիրակության խնդրում։

20. Ստուգումը պիտի վերջին հաշվով ոժանդակի բարձրացնելու կոմունիստների քաղաքական գիտելիքների մակարդակը։ Սակայն ստուգիչ հանձնաժողովները անձնական ստուգման ժամանակ չը պետք է դարձնեն այն քաղզրազիտության քննություն, առանձնապես անթույլատրելի յե ըստուգողին տալ խառնաշփոթ, ծուռ ու մուռ, խրթին հարցեր։

21. Ազնվական, առևտրական, չինովնիկական, մանր - բուրժուական ծագում ունեցող, ինչպես և ուրիշ կուսակցություններից յեկող կոմմունիստների վերաբերմամբ ստուգիչ հանձնաժողովները պետք է պարզեն, թե նման ստուգվողները լիովին հրաժարվել են արդյոք արոլետարիատին անհարազատ իդեոլոգիայից և ապացուցել են գործնականում իրենց նվիրածությունը կուսակցության։ Ա-

ռանձնապես ուշադիր ստուգման պետք է յենթարկվեն վոչ բանվորները, վորոնք մտել են կուսակցության մեջ քաղաքացիական պատերազմից հետո։

Ստուգիչ հանձնաժողովները պետք է հետաքրքրվեն բուրժուական տարրերի հետ կոմմունիստների ունեցած ազգակցական և այլ կապերով, գլխավորապես այն տեսակետից, թե բանվոր դասակարգին խորթ այդ տարրերը նյութական ու իդեոլոգիական ինչ ազդեցություն ունեն կոմմունիստների վրա, ուշադրություն դարձնելով այն բանի վրա, վորպեսզի ոտար տարրերի հետ առնչություն ունեցող կոմմունիստների հարաբերությունները՝ նկատման հետևանքով չձուլվեն ու չմիանան անհարազատ տարրերի կենցաղային և իդեոլոգիական գծերին։

Տնտեսական ու այլ աշխատավորներին ստուգելիս, վորոնց կուսակցությունը հանձնում է այնպիսի աշխատանք, վոր պահանջում է անմիջական շփում պրոլետարիատի խորթ միջավայրի հետ,—անհրաժեշտ է հաշվի առնել այդպիսի ընկերների աշխատանքի սպեցիֆիկ պայմանները, ըս-

տուգելով միաժամանակ, թե արդյոք նրանց գործնական հարաբերությունները չեն ներառում անհարազատ տարրերի կենցաղային և իդեոլոգիական կապի մեջ։

Կոմմունիստի վորակի այնպիսի վորոշումները, ինչպես որինակ՝ «խորթ տարր» կամ «կապ անհարազատ տարրերի հետ», պետք է ստուգհանձնաժողովները գործածեն չափազանց զգույշ և հեռատեսությամբ։ Ստուգվողին այդ բանում կարելի չե մեղադրել այն դեպքում միայն, յերբ ապացուցված է, վոր նա իր կապերը չի խզել պրոլետարիատին խորթ դասակարգերի իդեոլոգիայի ու կենցաղի հետ, յերբ ապացուցված է, վոր այդպիսի կապերն արգասավորում են նրան՝ վորպես կոմմունիստի և խախտում են բանվորների ու աշխատավորների վստահությունը դեպի պրոլետարիատի կուսակցությունը։

22. Այն կոմմունիստներին ստուգելիս, վորոնք առաջ պատկանելիս են յեղել ոպոզիցիոն խմբակներին ու հետո հեռացել են նրանցից,—ստուգհանձնաժողովները չպիտի սահմանափակվեն միայն այդ կոմմունիստների հարցաքննությամբ. նրանք պետք է

ստուգեն նաև այն, թե ինչ է արել բջիջն այդ կոմմունիստների վրա ներազդելու տեսակետից, համաձայն ՀՀԿ (բ) 15-րդ համագումարի դիրեկտիվի վոր վերաբերում է տրոցկիստական ոպոզիցիայի շարքային անդամներին։

23. Ստուգհանձնաժողովների, ինչպես նաև կուսակցական ամեն տեսակ այլ որգանների, աշխատանքը պետք է տարվի ամբողջ կուսակցության, այդ թվում է ստուգվող կազմակերպության, վերահսկողությամբ։ Ամեն մի բջիջ կարող է ընդհանուր ժողովում քննադատել ստուգհանձնաժողովի ամեն կարգի վորոշումը և բողոքարկել այն, սակայն չվերացնելով այդ վորոշումը։

Ստուգհանձնաժողովների անդամները չպիտի մոռանան, վոր յեթե նրանք ստուգում կատարելիս խախտեն ներկուսակցական դեմոկրատիան, կոպիտ ու անտակտ վերաբերմունք ցուցաբերեն,—կենթարկվեն կուսակցական պատասխանատվության, վորպես զտումն ու ստուգումը արատավորողներ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ՁՏՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼԻՍ

24. Նախքան զտումն ու ստուգումն սկսելը ստուգիչ հանձնաժողովները մանրամասն ծանոթանում են թե ստուգման յենթակա բջիջների աշխատանքի և թե այդ բջիջների անձնական կազմի հետ՝ կուսակցական կոմիտեյում, ՎՀ-ում և բջիջի բյուրոյում յեղած նյութերով և ստուգում են նախնական նյութերի տվյալները։

25. Ստուգումն յեվ զտումն կատարվում են բջեջների դռնբաց ժողովներում (խոշոր բջիջներում ըստ ցեխերի, հերթին և հիմնարկների առանձին մասերի), վորտեղ նախապես լսվում և քննվում է ստուգիչ հանձնաժողովի հաղորդագրությունը ստուգման և զտման նպատակների և խնդիրների մասին և բջիջի բյուրոյի զեկուցումը ստուգվող կազմակերպության դրության մասին։

Անհատ կոմմունիստների ստուգման ժամանակ բջիջների ժողովներում ստուգիչ հանձնաժողովը տալիս է կենսագրական տվյալներ և տեղեկություններ, վորոնք բնորոշում են յուրաքանչյուր ստուգողին, լսվում են ժողովին մասնակցողների կողմից տրված բնութագրությունները, հայտարարությունները և բացարկները (առվոդ) և նրանց քննությունը ըստ եյության։ Առանձին կոմմունիստներին վերաբերող հարցերի լուծումը և համապատասխան քվեարկությունը չեն կատարվելու այդ ժողովներում։

26. Բջիջների այն ժողովներին, վորոնք նվիրված են ստուգման և զտմանը, լայն մասնակցության են հրավիրվում անկուսակցական բանվորները, գյուղացիները և ծառայողները։ Այս նպատակով ժողովները պետք է գումարվեն համապատասխան ձեռնարկությունների, հիմնարկների կամ ակումբների շենքերում այն ժամերին, վորոնք ավելի հարմար են և ապահովում են կուսակցականների և անկուսակցականների առավելագույն մասնակցությունը։

Խորհրդային հիմնարկների բջիջների զտման նվիրված կուժողովներին անհրաժեշտ է մասնակից դարձնել այն ձեռնարկների կուսակցական և անկուսակցական բանվորներին, վորոնք կապված են տվյալ հիմնարկի աշխատանքի հետ։

Ծանոթ.—Անհրաժեշտության դեպքում ստուգիչ հանձնաժողովները կարող են թույլատրել բացի բջիջները դռնբաց ժողովներից նաև դռնփակ ժողովների զումարումը։

27. Դռնբաց կուսժողովներում ըստուգումն ավարտելուց և առանձին կոմմունիստների մասին լրացուցիչ պարզաբանության և անհրաժեշտ տվյալների հետազոտության հետ կապված աշխատանքը կատարելուց հետո, ստուգիչ հանձնաժողովներն իրենց նիստերում վորոշումներ են կայացնում յուրաքանչյուր ստուգվող կոմմունիստի վերաբերմամբ.

28. Կոմմունիստների անձնական ստուգման և զման պրոցեսում բջիջների աշխատանքի վորակի ստուգումը պետք է ընդգրկի կուսակցական աշխատանքի կարևորագույն խնդիրները, նայած բջիջների զանազան կատեգորիաների աշխատանքի առանձնահատուկ խնդիրներին և պայմաններին։

Բջիջների բոլոր կատեգորիաների համար ընդհանուր հարց պիտի հանդիսանան՝ կուսակցական դիսցիպլինայի դրությունը, ներկուսակցական դեմոկրատիայի դրությունը, մասսայական աշխատանքը, ինքնաքննադատության ծավալումը, վերաբերմունքը դեպի արտադրությունը քաղաքում, դեպի կոլեկտիվ շինարարությունը գյուղում և պայքարը իդեոլոգիական տատանումների ու թեքումների դեմ։

29. Բջիջի ստուգմանն ու զմանը վերաբերյալ ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո ստուգ-հանձնաժողովը բաց ժողովում պատճառաբանված հաղորդագրություն և անում՝ ստուգման յենթարկված կոմմունիստներից յուրաքանչյուրի նկատմամբ կայացրած իր վորոշումների մասին և զեկույց և տալիս բջիջի կատարած աշխատանքի ընդհանուր կացության մասին։

Ստուգ-հանձնաժողովի հաղորդագրությունն ու զեկույցը քննվում են կուսժողովում, ըստ վորում, բջիջն իրավունք ունի ստուգ-հանձնաժողովի առանձին վորոշումների վերաբերմամբ, վորոնց նա համաձայն չէ, խնդրել վերաքննություն կատարել կամ բողոքարկել վերադաս որգանների առաջ։

Ստուգման հետ կապված՝ բջիջների յեղրափակման ժողովներն անհրաժեշտ դեպքերում կարող են լինել դռնփակ։

30. Անձնական ստուգման արձանագրության մեջ նշանակվում են հետևյալ տվյալները յուրաքանչյուր ստուգվող ընկերոջ մասին—ազգանուն, անուն, հայրանուն, վո՞ր թվից և Համկոմկուսի անդամ, կուստոմսի կամ թեկնածուական քարտի համարը, տարիքը, սոցիալական ծագումը, ընդհանուր կրթությունը, կատարած աշխատանքը ստուգման մոմենտին, կարմիր բանակում ծառայելու տևողությունը, ծառայո՞ւ է սպիտակ բանակում մոբիլիզացիայի յենթարկվելով, կամ կամավոր, ի՞նչ պաշտոն էր վարում և ընդբաղվում մինչև 1917 թ., պատկանել է արդյոք ուրիշ կուսակցությունների և որքան ժամանակ։

Գյուղացիների վերաբերմամբ անհրաժեշտ է նշել տնտեսության չափը, ստուգման մոմենտին ունեցած վճարովի կամ անվարձ ընտրովի պաշտոնը, սպառողական կամ գյուղատնտեսական կոոպերատիվի անդամակցությունն, մասնավորապես, մասնակցությունը կոլտնտեսության մեջ։

Արտադրական բանվորների վերաբերմամբ ցույց տալ արտադրական ստաժը, վորակավորումը և տնտեսական կապը գյուղի հետ։

Նույնը խորհրդային ծառայող կոմունիստների վերաբերմամբ։ Արձանագրության մեջ նշանակվում են նաև տվյալներ ստուգվող ընկերոջ՝ կուսակցական և հասարակական աշխատանքին մասնակցելու մասին, ստուգման հաստատած՝ կոմետիկայից կուսակցական տոկունության խախտման, անհարազատ տարրերի հետ կապ ունենալու և այլն փաստերը։ Այս բոլոր փաստերը մանրակրկիտ ստուգումից և ապացուցված լինելուց հետո նշանակվում են արձանագրության պատճառաբանող մասում «լսեցին»։ Հանձնաժողովի վորոշումները կուսակցությունից հեռացնելու կամ կուսակցական պատիժ նշանակելու մասին՝ «վորոշեցին» մասում պետք է ճշտորեն պատճառաբանվեն և հիմնավորվեն՝ նշելով հաստատված փաստերը։

Յուրաքանչյուր կոմմունիստի անձնական ստուգման գործին պետք է կցվեն բոլոր փաստաթղթերը, վորոնք հաստատում են արձանագրության մեջ նշանակված տեղեկությունները և բացասական բնութագրությունները ստուգվողի մասին։ Նման փաստաթղթերի բացակայության դեպքում պետք է նշվի, թե ում խոսքերի

հիման վրա յե արձանագրված մեղադրանքը, ով և ինչպես է ստուգել։ Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ վորոշումների տարտամ ձևակերպումներ՝ ինչպես «հեռացվում է մի շարք փաստերի պատճառով» կամ, «վորպես կուսակցության անպետք անդամ», «հեռացնել վորպես բալլաստ»։ Պետք է համառոտ, բայց ճշտորեն նշվի, թե ինչ փաստերի մասին է խոսքը, ինչումն է անպետք» կամ ինչու է «բալլաստ» է և այլն։

31. Ստուգիչ հանձաժողովներն իրավունք ունեն պահանջելու ամեն մի կուսակցական կազմակերպությունից և յուրաքանչյուր կոմմունիստից՝ տեղեկություններ, թե բջիջի աշխատանքների մասին և թե առանձին կոմմունիստի հատկությունների գնահատականի մասին։

32. Այն դեպքում, յերբ կուսակցության անդամը կամ թեկնածուն հարգելի պատճառով չի կարող վորոշված ժամկետին գալ ստուգման, նա պետք է ստուգման յենթարկվի իր բջիջում Վ.Հ կողմից, իր վերադարձից հետո։ Վորպես ընդհանուր կանոն, ստուգումը չի կարող կատարվել ընկերոջ բացակայությամբ։ Կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները պարտավոր են ներկայանալ ստուգիչ հանձնաժողով՝ յերբ նրանց կանչեն։

Յուրաքանչյուր կոմմունիստ ստուգումից պիտի անց կենա այն բջիջում, վորտեղ նա գտնվում է մշտական հաշվառքի մեջ (վորտեղ գտնվում է նրա հաշվառման քարտը)։ Այդպիսով իր մշտական աշխատավայր հիմնարկի բջիջում հաշվառված այն կոմմունիստը, վոր առանձին յելույթների համար կցված է ավյալ ձեռնարկին, ղրտումն անց է կացնում հիմնարկի բջիջում։ Այն դեպքերում, յերբ կոմմունիստը հաշվառված է բջիջում վոչ ըստ իր ծառայության (կամ ուսանելու) վայրի, զատումից նա անցնում է ծառայության տեղում, ըստ վորում, նրան ստուգելիս՝ անհրաժեշտ է նրա մասին կարծիք հարցնել նրա աշխատանքի տեղից։

Ճիշտ այդպես նաև այն դեպքերում, յերբ ընկերը ստուգումից անմիջապես առաջ ավյալ բջիջն և յեկել այլ կազմակերպությունից. նա ստուգվում է այն բջիջում, վորտեղ գտնվում է ստուգման մոմենտին, պայմանով վորպեսզի նրա բնութագիրը և նրան վերաբերող նյութերն ստացվեն այն

կազմակերպությունից, վորտեղից նա յեկած է յեղել։ Կազմակերպությունները պարտավոր են անմիջապես ուղարկել ստուգհանձնաժողովի պահանջված բոլոր նյութերն ու տեղեկությունները։

Ծանոթություն.—Յերբ հաշվի յեն առնվում այն կոմմունիստները, վորոնք յերկար ժամանակով յեկել են սեզոնային աշխատանքների, կուսկոմը սեզոնայիններին տոմարագրելու հետ միասին, այդ մասին իրազեկ է անում կուսակցական կազմակերպությանն այն վայրում, վորտեղ ապրում է սեզոնայինը, խնդրելով նրա մշտական բջիջից՝ ուղարկել նրան վերաբերյալ նյութերը, ստուգելով նրան ըստ տվյալ աշխատանքի վայրի։

Ստուգման ընդհանուր կարգից բացառություն են կազմում այն ընկերները, վորոնց վերաբերմամբ ստուգհանձնաժողովը չի կարող տեղում պարզել նրա բնութավորման մեջ կարևոր փաստերը (կուսակցական ստաժ, լուրջ մեղադրանքներ և այլն)։ Այդպիսի դեպքերում այդ ընկերներին վերաբերող գործերը հանձնվում են տեղական համապատասխան վերահսկիչ հանձնաժողովին։

33. Ստուգիչ հանձնաժողովների բոլոր վորոշումներն ու վճիռները մտնում են իրենց ույժի մեջ՝ սկսած այն մոմենտից, յերբ համապատասխան կուսակցական կոմիտեները հաստատում են նրանց արձանագրությունները։

34. Ստուգհանձնաժողովների գործնական կազմակերպչական առաջարկները՝ թե ամբողջ բջիջի և թե առանձին կոմմունիստի վերաբերմամբ, իրականացվում են այն կարգով, ինչ կարգով սովորաբար կուսակցական կոմիտեները իրանցում են կուսակցական-խորհրդային աշխատանքի ղեկավարությունը։

35. Ստուգիչ հանձնաժողովները կարող են վորոշում կայացնել՝ ընկերներին աշխատանքից հեռացնելու մասին, յերբ նրանց կարծիքով վնասակար է այդպիսիների ներկայությունը տվյալ աշխատանքի մեջ, սակայն այդ վորոշման իրագործման իրավունքը վերապահված է համապատասխան վերահսկիչ հանձնաժողովին և կուսակցության կոմիտեյին։

Այդ վորոշումը հրապարակվում է այն ժամանակ, յերբ կուսակցության

կոմիտեն հաստատում և ստուգիչ հանձնաժողովի վորոշումը։

36. Ստուգհանձնաժողովի վճիռը բջիջի վերջին ժողովում հայտնելուց առաջ՝ պետք է այդ մասին իրազեկ արվի համապատասխան տեղական կուսկոմիտեն։

37. Անդամակցական բոլոր գրքույկները և թեկնածուական բոլոր քարտերը ստուգվում են՝ իրենց պարունակած տեղեկությունների ճշտության տեսակետից։ Անդամակցական քարտերը խլվում են միայն այն կոմունիստներից, վորոնց նկատմամբ ստուգհանձնաժողովները վորոշում են կայացրել՝ կուսակցությունից նրանց հեռացնելու մասին, համաձայնության գալով համապատասխան կուսակցական կոմիտեի և վերահսկիչ հանձնաժողովի հետ։

Կուսպատժի յե յենթարկում համապատասխան վերահսկիչ հանձնաժողովը։

38. Ստուգիչ հանձնաժողովների միջոցով կուսակցությունից հեռացված կոմունիստները իրավունք ունեն այցելելու կուսակցական դռնփակ ժողովները մինչև այն մոմենտը, յերբ համապատասխան վերահսկիչ հանձնաժողովը կհաստատի հեռացման մասին հանած վորոշումը։

39. Ստուգման ու զտման յենթակա չեն այն ընկերները, վորոնք մտել են կուսակցության թեկնածուների ցանկը, սակայն դեռ վերջնականապես հաստատված չեն համապատասխան կուսակցական մարմնի կողմից, համաձայն կուսակցության կանոնադրության։

ՍՏՈՒԳՄԱՆ ՅԵՎ ԶՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՔԸ ՅԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Զտման և ստուգման ընթացքում շրջանային Վ. հանձնաժողովները պարբերաբար, յերկու շաբաթը մի անգամից վոչ պակաս, համապատասխան ազգ. կոմկուսների ԿՎ հանձնաժողովներին և յերկրային ու մարզային Վ. Հ-երին ուղարկում են տեղեկագրեր զտման յեվ ստուգման ընթացքի մասին թվական տվյալներով ըստ ՀԿԿ (բ) վիճակագրական բաժնի առաջարկած ձևի։ Նման պարբերական տեղեկագրերի պատճենները միաժամանակ ուղարկվում են ՀԿԿ (բ) Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողո-

վի կազմակերպչական-հրահանգչական բաժնին։ Ստուգման յեվ զտման նյութերի մշակումը կատարվում է կուսկոմի ապարատի կողմից ՎՀ-ի զեկավարությամբ։

41. Ստուգման ավարտումից հետո նույն կարգով ներկայացվում են հաշվետու զեկուցումներ ՀԿԿ (բ) ԿՀՎ-ի վորոշած ժամկետներին յուրաքանչյուր ազդ. կոմկուսի, յերկրային կամ մարզային կազմակերպության համար։

Զտման և ստուգման նյութերի մշակումը, հաշվետու զեկուցումների կազմությունը շրջաններում (նահանգներում) կատարվում է համապատասխան վերահսկիչ հանձնաժողովների կողմից։

42. ՀԿԿ (բ) այն անդամներն ու թեկնածուները, վորոնք դժգոհ են ստուգիչ հանձնաժողովների վորոշումներից, կարող են բողոքարկել այդ վորոշումները տեղական վերահսկիչ հանձնաժողովում մեկ ամիս ժամանակամիջոցում։ Տեղական ՎՀ-ի վորոշումներից դժգոհները կարող են բողոքարկել այդ վորոշումները վերադաս Վ. Հ—ում՝ տեղական ՎՀ-ի միջոցով, իսկ վերջինիս վորոշումները՝ ՀԿԿ (բ) կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովում։

Տեղական ՎՀ-ները պարտավոր են այդ բողոքները զտման ամբողջ գործի, բոլոր նյութերի հետ միասին անհապաղ ուղարկել վերադաս ՎՀ-ին, ուր պետք է գնա տվյալ բողոքարկումը։ Տեղական ՎՀ-ների վորոշումների բողոքարկման ժամկետը՝ շրջանային ՎՀ-ում—մի ամիս, ԿՎՀ-ում՝ յերկու ամիս ՎՀ-երի վորոշումները պարզվելու որից սկսած։

Հաշվառքի կարգում մնում է միայն ՎՀ-ի վերջնական վորոշումը ստուգման ժամանակ։ Վերջին ստուգման ժամանակ կայացված բոլոր վորոշումները դուրս են հանվում։

43. Ստուգիչ հանձնաժողովները պարտավոր են կուսակցությունից հեռացվածներին կամ կուսպատիժների յենթարկվածներին վոչ միայն բացատրելու նրանց բողոքարկման իրավունքները և ժամկետները, այլ և աջակցելու, խորհուրդ և ցուցմունքներ տալով, թե ինչպես պետք է գրել և ուղարկել բողոքարկման հայտարարությունները, ինչպես և ումից իմանալ բողոքարկման արդյունքը և այլն։ Նման ոգնություն առանձնապես անհրաժեշտ է բանվոր, բատրակ և չքավոր կոմմունիստների վերաբերմամբ։

44. Վերահսկիչ հանձնաժողովները ստուգիչ հանձնաժողովների արձանագրությունների հետ ծանոթանալու ժամանակ կարող են և պարտավոր են վերանայել հեռացվածների կամ կուսպատժի յենթարկվածների գործը վերջիններիս կողմից ստուգիչ հանձնաժողովների վորոշումների բողոքարքում չլինելու դեպքում, յեթե այդ վորոշումները բավարար չափով չեն պատճառաբանված, կամ յեթե ստուգումը կատարվել է ներկա հրահանգի հիմնական ցուցմունքների խախտումով։

Այդ դեպքում գործը վերաքննվում է անպայման ստուգհանձնաժողովի նախագահի կամ նրա անդամներից մեկն ու մեկի ներկայությամբ, յեթե հնարավոր է, նաև ստուգվողի ներկայությամբ։

Վոչպես կանոն, վճռաբեկ դանդատները քննվում են վերահաս. հանձնաժողովների կողմից՝ այն հանձնաժողովի նախագահի կամ անդամի ներկայությամբ, վոր վայցրել է համապատասխան վորոշումը։ Տեղական վերահսկիչ հանձնաժողովի, շրջանային հանձնաժողովի և կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի վորոշումներ-

ի դեմ տրված վճռաբեկ դանդատների քննությունը կատարվում է, ըստ հնարավորին, պատասխանատվության յենթարկվողների ներկայությամբ կամ ինցիդենտի վայրը գնալու միջոցով։

45. Այն դեպքում, յերբ ստուգհանձնաժողովը համաձայն չէ իր վորոշումը փոփոխելուն, նա իրավունք ունի իր հանած վորոշման փոփոխությունը բողոքարկելու վերադաս վերահսկիչ հանձնաժողովի առաջ։

ՀԵՏ ԱՍԵ ԿՐԴՐՍՆ
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. Մ. Ա. Մաշտոցի անվան

<< Ազգային գրադարան >>
NL0182476

Ca2202